ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2025 ԹՎԱԿԱՆԻ N 03-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ , 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1? ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2026 թվականի վարձատրության չափը սահմանել 520 000 /հինգ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ։

2? ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24?01?2025 թվականի N 03-Ն որոշումը ճանաչել ուժը կորցրած ։

3? Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։